**Պատմություն և մշակույթ** 2025 № 22 (1)
History and Culture

https://doi.org/10.46991/hc.2025.22.1.163

# The Source-Study Value of Garegin Nzhdeh's Works in the Historical and Military-Geographical Studies of Syunik

**Gor Ghazaryan**
https://orcid.org/0009-0004-7741-8795
YSU, Faculty of History, Master's Program in the Department of Armenian History
gor.ghazaryan1998@gmail.com

**Samvel Danielyan**
https://orcid.org/0009-0007-7927-3691
Khachatur Abovian Armenian State Pedagogical University
Master of professional pedagogy (geography)
samveldanielyan06@gmail.com

**Keywords:** Garegin Nzhdeh, Syunik, Khustup, Kaputjugh, historical geography, military geography, source studies, nature of Syunik.

*General Garegin Nzhdeh's works contain multifaceted information about the natural environment of Syunik, which is of great significance for the region's historical and military-geographical studies. This information includes Syunik's mountains, rivers, climatic conditions, flora and fauna, as well as its topographical features. In this article, the scientific observations found in Nzhdeh's works have been systematized and analyzed, comparing them with historical sources and contemporary data. Based on this information, it is possible to reconstruct the natural characteristics of Syunik during 1919-1921, including its military-geographical nature, as well as assess the ecological changes that have occurred in the region over time.*

## Գարեգին Նժդեհի աշխատությունների աղբյուրագիտական արժեքը Սյունիքի պատմաշխարհագրական ու ռազմաաշխարհագրական ուսումնասիրությունների գործում

**Գոռ Ղազարյան**
ԵՊՀ Պատմության ֆակուլտետ, Հայոց պատմության ամբիոնի մագիստրոս

History and Culture Vol.-22(1), 2025, pp. 163-179

Received: 12.06.2025
Revised: 11.08.2025
Accepted: 17.09.2025

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2025

**The Source-Study Value of Garegin Nzhdeh's Works in the Historical and Military-Geographical Studies of Syunik**

**Գարեգին Նժդեհի աշխատությունների աղբյուրագիտական արժեքը Սյունիքի պատմաշխարհագրական ու ռազմաաշխարհագրական ուսումնասիրությունների գործում**

**Սամվել Դանիելյան**

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան,
Մասնագիտական մանկավարժության (աշխարհագրության) մագիստրոս

**Հիմնաբառեր՝** Գարեգին Նժդեհ, Սյունիք, Խուստուփ, Կապուտջուղ, պատմական աշխարհագրություն, ռազմական աշխարհագրություն, աղբյուրագիտություն, Սյունիքի բնություն։

*Զորավար Գարեգին Նժդեհի աշխատությունները բազմաբնույթ տեղեկություններ են պարունակում Սյունիքի բնական միջավայրի վերաբերյալ, որոնք էական նշանակություն ունեն երկրամասի պատմաաշխարհագրական ու ռազմաաշխարհագրական ուսումնասիրությունների համար։ Դրանք ընդգրկում են Սյունիքի լեռները, ռելիեֆի առանձնահատկությունները, կլիմայական պայմանները, գետերը, բուսական ու կենդանական աշխարհը։ Սույն հոդվածում համակարգվել և վերլուծվել են Գ. Նժդեհի աշխատություններում ներկայացված բնագիտական վկայությունները՝ դրանք համեմատելով պատմական այլ աղբյուրների ու ժամանակակից տվյալների հետ։ Այս տեղեկությունների հիման վրա հնարավոր է վերականգնել 1919-1921 թթ. Սյունիքի բնության առանձնահատկությունները՝ ներառյալ նրա ռազմաաշխարհագրական բնույթը, ինչպես նաև գնահատել տարածաշրջանում տեղի ունեցած էկոլոգիական փոփոխությունները։*

**Источниковедческая ценность трудов Гарегина Нжде в деле историко-географических и военно-географических исследований Сюника**

**Гор Казарян**

Факультет истории ЕГУ, Магистратура кафедры истории Армении

**Самвел Даниелян**

Армянский государственный педагогический университет имени Хачатура Абовяна
Магистр профессиональной педагогики (география)

**Ключевые слова:** Гарегин Нжде, Сюник, Хуступ, Капутджух, историческая география, военная география, источниковедение, природа Сюника.

*Труды генерала Гарегина Нжде содержат разностороннюю информацию о природной среде Сюника, которая имеет важное значение для историко-географических и военно-географических исследований региона. Эти сведения охватывают горы Сюника, реки, климатические условия, флору*

*и фауну, а также рельефные особенности. В данной статье систематизированы и проанализированы научные наблюдения, содержащиеся в трудах Нжде, с их сопоставлением с историческими источниками и современными данными. На основе этой информации возможно восстановить природные особенности Сюника в 1919-1921 годах, включая его военно-географические характеристики, а также оценить экологические изменения, произошедшие в регионе со временем.*

* * *

*«Կատարեալ առաջնորդի հետ է իր երկրի արեւը։*
*Նրա սիրտը լցնում է իր դաշտերի շունչը, իր լեռների սէգութիւնը։*
*Նրան օրհնում է հայրենի երկինքը»։*
*Գարեգին Նժդեհ*

**Ներածություն:** 1919 թ. օգոստոսին ՀՀ կառավարության որոշմամբ Գարեգին Նժդեհը [Գ. Տեր-Հարությունյան] ուղարկվեց Սյունիք՝ Էդիֆ բեյի զորքերի կողմից պաշարված Գողթանին օգնություն հասցնելու նպատակով [Սիմոնյան, 2017, 305-306]: Սյունիք ժամանելուց հետո նա ստանձնեց Կապանի, Արևիքի ու Գողթանի [Կապարգողթ] զորքերի ընդհանուր հրամանատարությունը և 1919-1921 թթ. ղեկավարեց Զանգեզուրի գոյամարտը: Սյունիքի ժողովուրդը Գ. Նժդեհի ռազմական հաջողությունների ու Սյունիքի պաշտպանության գործում ունեցած մեծ դերակատարման համար նրան սկսեց անվանել «Երկրորդ Դավիթ Բեկ» [«Սիւնիք», 1920]:

Այս և հետագա տարիներին Գ. Նժդեհը գրում էր պատմագիտական արժեք ներկայացնող մի շարք աշխատություններ, որոնք վերաբերում են Սյունիքի ռազմաքաղաքական իրադրությանը, բնակչության սոցիալ-տնտեսական վիճակին, գործադրված ռազմավարություններին ու այլ մանրամասների: Դրանց թվում առանձնահատուկ նշանակություն ունեն «Ազատ Սյունիք», «Իմ պատասխանը», «Ինչու պայքարեց Լեռնահայաստանը», «Լեռնահայաստանի գոյամարտը», «Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից» և այլ աշխատություններ: Այս գործերում Գ. Նժդեհը տալիս է Սյունիքի բնական միջավայրի մանրամասն նկարագրությունը՝ լեռները, ռելիեֆային առանձնահատկությունները, կլիմայական պայմանները, գետերը, բուսական ու կենդանական աշխարհը:

Սույն հոդվածի նպատակն է համակարգել ու վերլուծել Գ. Նժդեհի աշխատություններում ներկայացված բնագիտական վկայությունները՝ դրանք դնելով պատմաաշխարհագրական ու ռազմաաշխարհագրական ուսումնասիրությունների համատեքստում:

Հոդվածի գիտական նորույթն այն է, որ առաջին անգամ համակարգվում և վերլուծվում են Գ. Նժդեհի՝ Սյունիքի մասին բնագիտական դիտարկումները: Մինչ այժմ Գ. Նժդեհի գործունեության վերաբերյալ կատարված ուսումնասիրություններն առավելապես կենտրոնացած են եղել նրա ռազմական ու քաղաքական դերի վրա, իսկ նրա բնագիտական դիտարկումները համապարփակ չեն վերլուծվել: Այս հոդվածը նպատակ ունի լրացնելու այդ բացը՝ ներկայացնելով Գ. Նժդեհի բնագիտական դիտարկումների աղբյուրագիտական արժեքն ու դրանց կիրառելիությունը արդի գիտական հետազոտություններում:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է Հայաստանի ներկայիս ռազմաքաղաքական դժվարին պայմաններում Սյունիքի ռազմական աշխարհագրության

ուսումնասիրության անհրաժեշտությամբ, ինչը կարևոր նշանակություն ունի տարածաշրջանի անվտանգության ապահովման համար: Բացի դրանից՝ Սյունիքի բնական միջավայրի պատմական վիճակի վերականգնումն ու դրա ժամանակակից էկոլոգիական փոփոխությունների գնահատումը կարևոր են տարածաշրջանի էկոհամակարգերի կառավարման ու պահպանման համար: Այս ուսումնասիրությունը կարող է ունենալ ինչպես պատմագիտական, այնպես էլ՝ կիրառական նշանակություն՝ նպաստելով Հայաստանի պաշտպանական կարողությունների զարգացմանն ու տարածաշրջանի բնապահպանական ռազմավարության մշակմանը:

Հոդվածում կիրառվել են պատմահամեմատական ու վերլուծական մեթոդներ՝ Գ. Նժդեհի աշխատություններում ներկայացված տեղեկությունները համադրելով պատմական աղբյուրների ու ժամանակակից տվյալներին:

**Գ. Նժդեհի ուսումնասիրությունները Սյունիքում**: 1919 թ. Գ. Նժդեհը, անցնելով Սյունիք, սկսում է ուսումնասիրել երկրամասի տեղադիրքը, աշխարհագրությունը, բնակչության նիստուկացը և այլն.

*«Ղափանի Հանքերում հաստատելով շտաբս՝ անցա գործի: Շրջագայելով գավառակները՝ տեղնուտեղը ուսումնասիրեցի երկրի աշխարհագրությունը և տեղագրությունը: Ծանոթացա շրջանների ռազմագիտական «համառ» և թույլ կետերի հետ: Գյուղից գյուղ անցնելով՝ ուսումնասիրեցի ժողովրդի նիստուկացը, սովորությունները, ավանդությունները, հոգեբանությունը» [Նժդեհ, 2002, 43]:*

Սյունիքում իրականացված ռազմական գործողություններից առաջ Գ. Նժդեհը մանրամասն ուսումնասիրել է տարածաշրջանի աշխարհագրական առանձնահատկությունները՝ տեղադիրքը, բնական արգելքները, ռազմավարական նշանակություն ունեցող բարձունքներն ու խոցելի դիրքերը: Նա գնահատել է բնական պայմանների ազդեցությունը ռազմական արշավների պլանավորման, տեղաշարժի կազմակերպման, հաղորդակցության արդյունավետության ու պաշտպանական մարտավարության վրա: Գ. Նժդեհի դիտարկումները թույլ են տվել առավելագույնս օգտագործել շրջակա միջավայրի առանձնահատկությունները՝ ապահովելով ռազմավարական առավելություն հակառակորդի նկատմամբ:

**Լեռների մասին հիշատակություններ:** Ուշագրավ են Գ. Նժդեհի հաղորդած տեղեկությունները Սյունիքի լեռների, դրանց առանձնահատկությունների ու ռազմավարական նշանակության մասին: Մարտական տարբեր գործողությունների առթիվ Գ. Նժդեհը Սյունիքի լեռներից հիշատակում է Խուստուփը, Ղափուջուղը [Կապուտջուղ], Կոմբախը [Գոմբակ], Չիմանդաղը [Կատար], Գյազբելը [Արամազդ] և բազմաթիվ այլ լեռնագագաթներ:

Գ. Նժդեհը Սյունիքի լեռները ներկայացնում է որպես երկրամասի ռազմավարական անվտանգության հիմնական գործոն՝ ընդգծելով, որ դրանց գրավումը թշնամու կողմից կարող է ճակատագրական հետևանքներ ունենալ ոչ միայն Սյունիքի, այլև ամբողջ Հայաստանի համար.

*«Սյունիքը լեռներ ունի, որոնց գրավումը թշնամու կողմից կարող է ճակատագրական հետևանքներ ունենալ ոչ միայն լեռնահայության, այլև ամբողջ Հայաստանի համար: ...Սյունիքը սև հողերի վերածելու նպատակով թուրքն ու թաթարը քանիցս ձգտել են անսպասելիորեն երևալ*

*այս կամ այն ռազմագիտորեն կարևոր բարձունքի վրա և նեղը դնել հայությունը: Կռվի մինևույն ռազմափորձային ձևերին դիմել ենք և մենք՝ օգտագործելով լեռներն ու բարձունքները՝ որպես համառ կետեր, որպես տիրապետող դիրքեր, և ամենալավը, որպես ռազմագիտական բանալիներ: Ահա՛ թե ինչու ինձ պետք էր՝ հրահրելով ժողովրդի սերը դեպի իր լեռները, հաճախ կրկնել Սյունեցուն, թե հայրենի լեռների վրա է իր փրկությունը» [Նժդեհ, 2013, 84]:*

Գ. Նժդեհը նկարագրում է, թե ինչպես է հակառակորդը ձգտել գրավել ռազմավարական նշանակություն ունեցող բարձունքները՝ նպատակ ունենալով նվազեցնել հայ բնակչության դիմադրողականությունն ու երկրամասում հաստատել իր վերահսկողությունը:

*«Մեր թշնամուն պետք է ... Խուստուփը, Գողթանի Ղափուջուղը, Գենվազի Այիչանգլը[1], Կապարգողթի այդ փոքր Մասիսներն են պետք, որոնց տիրելով ևս ընդմիշտ պետք է տեր դառնա Զանգեզուրին» [Սիմոնյան, 2017, 597]:*

Գ. Նժդեհի հրամանատարությամբ գործող հայկական զորքերը նույնպես հաջողության են հասել՝ հաճախ օգտագործելով լեռները որպես «ռազմագիտական բանալիներ»: Այս մոտեցումը կարևորագույն դեր է խաղացել Զանգեզուրի գոյամարտի հաղթանակի ապահովման գործում:

Զորավարը լեռները դիտարկում էր ոչ միայն ռազմավարական, այլև տեղի բնակչության հոգեբանական դիմադրողականության ու մարտական ոգու ամրապնդման առանցքային գործոն: Նշված համատեքստում հատկապես առանձնանում է Խուստուփ լեռը: Գ. Նժդեհը Խուստուփը ներկայացնում է որպես Սյունիքի դիմադրության հավաքական խորհրդանիշ.

*«Խուստուպ լե՛ռը: Այդ հպարտ հսկային էր վիճակված մեր լեռնաշխարհի ազատության ու փառքի խորհրդանիշը լինելու» [Նժդեհ, 2002, 39]:*

Խուստուփը, ըստ զորավարի, Սյունիք-Լեռնահայաստանի պատմական հիշողության, հերոսական պայքարի և ազգային անմահության խորհուրդն է.

*«Չկա ...Լեռնահայաստանը, բայց կա ...նրա փառքը, նրա հերոսական պատմությունը, նրա անմահությունը մարմնացնող Խուստուպը» [Նժդեհ, 2002, 344]:*

Գ. Նժդեհը Խուստուփին վերագրում է սրբազան նշան, երբեմն հասարակություն՝ կապելով այն հայ ժողովրդի փրկության, ազգային միասնության ու գալիք հաղթանակների հետ: Պատահական չէ, որ զորավարը ժողովրդին պատգամում է իրեն թաղել Խոստումի ամենաբարձր կատարին.

*«Ժողովուրդ, ...երբ ինձ սպանված տեսնես, դիակս թագիր Խուստուպի ամենաբարձր կատարին, որտեղից երևա ինձ և՛ Ղափանը, և՛ Գենվազը, և՛ Գողթանը, և՛ Գեղվաձորը: Իսկ մինչև այդ հայացքդ մի կտրիր Խուստուպից: Որքան հաճախ, որքան շատ նայես այս սեգ ու սև ամպերով ծածկված սարին, այնքան շուտ կգա, կհասնի փրկությունդ» [Նժդեհ, 2002, 78]:*

Ականավոր ազգագրագետ Ստեփան Լիսիցյանի հաղորդած տեղեկություններով երկրամասում տարածված երևույթ է եղել լեռների պաշտամունքը: Մասնավորապես Խուստուփը

[1] Խոսքը Կապսար (նաև՝ Փառական) լեռնագագաթի մասին է: Գտնվում է Փոքր Կովկաս լեռնահամակարգում՝ Զանգեզուրի լեռնաշղթայի հարավային հատվածում (Հակոբյան և ուրիշներ, 1988, 951):

հնուց ի վեր տեղացիների կողմից համարվել է սրբազան լեռնագագաթ, որտեղ ամեն տարի Վարդավառի տոնին ուխտի էին գալիս ինչպես հարակից շրջանների, այնպես էլ հեռավոր գյուղերի բնակիչները՝ լեռան քարանձավում մոմ վառելու, աղոթելու ու մատաղ անելու համար [Լիսիցյան, 1969, 278-280]: Խուստուփի քարանձավը կոչում էին Եկեղեցի, որտեղից բխող ջուրը համարվում էր «սուրբ և հրաշագործ» [Լիսիցյան, 1969, 281]: Լեռան ձախակողմյան գագաթը կոչվում էր Ճգնավոր, որտեղ ուխտավորները բարձրանում էին ոտաբոբիկ որպես մի սրբազան բարձունք [Լիսիցյան, 1969, 281]: Գ. Նժդեհը, նախապես ուսումնասիրելով Սյունիքի բնակչության «սովորությունները», խորապես գիտակցում էր Խուստուփ լեռան սրբազան նշանակությունը սյունեցիների համար: Ուստի պատահական չէ, որ հենց Խուստուփը դարձավ Լեռնահայաստանի գոյապայքարի խորհրդանիշ՝ միավորելով հաղթանակի ու ազգային միասնության գաղափարները:

**Կլիմայի մասին հիշատակություններ:** Գ. Նժդեհի աշխատությունները կարևոր տեղեկություններ են պարունակում Սյունիքի կլիմայական առանձնահատկությունների վերաբերյալ, որոնք ազդել են թե՛ բնակչության կենսակերպի, թե՛ ռազմական գործողությունների վրա: Նա հատկապես ընդգծում է ձմեռների խստությունը, առատ ձյունը, բուքն ու մառախուղը, որոնք դժվարացրել են տեղաշարժը և մարտական գործողությունները:

1920 թ. մարտին Գ. Նժդեհը ձեռնարկում է Գողթանի արշավանքը՝ փորձելով իր զինվորներով Ղափանից Կապուտջուղի[1] լեռնանցքով անցնել Գողթան [Սիմոնյան, 2017, 416]: Գ. Նժդեհի նկարագրության համաձայն՝ մոտ 12,300 ոտնաչափ Կապուտջուղի լեռնանցքը ձմռան ամիսներին դառնում էր անանցանելի, ինչի հետևանքով Գողթանն ամբողջությամբ կտրվում էր արտաքին աշխարհից: Սա մեծապես սահմանափակում էր տարածքի հաղորդակցությունն ու տեղաշարժի հնարավորությունները [Նժդեհ, 1999, 140; Լիսիցյան, 1969, 16]: Հետագայում զորավարը նկարագրում է այդ դժվարին ուղևորությունը. «զայլ խեղդող» բուք, փոթորիկ, խոր ձյուն և ոչ մի արահետ.

*«Զարհուրելի է Ղափուջուղ հսկան փոթորկի ժամին: Կարծեք ձմեռը միայն այդ լեռնաշղթայի վրա է հավաքել իր բովանդակ ուժերը մեր ճանապարհը կտրելու համար: Փոթորիկ կա, ձյունախառն մի կատաղի քամի, որ, ձյունի ամբողջ ամպեր ցրելով առաջացող զորքի վրա, համառորեն լցնում է զինվորների աչք ու բերանը, ծեծում երեսները, թուլացնում քայլվածքը» [Նժդեհ, 2002, 59]:*

Թեպետ 1920 թ. մարտին Կապուտջուղի լեռնանցքն անանցանելի էր համարվում, սակայն Գ. Նժդեհը որոշում է ամեն գնով օգնության հասնել Գողթանին: Ճանապարհը հեշտ չէր, իսկ եղանակը՝ անկանխատեսելի ու խիստ վտանգավոր.

*«Շատ քիչ գիշերներ կարող են տալ այդ լեռնանցքի նկարագրությունը: Մեզ վիճակված էր երևակայածից ավելին տեսնել ու կրել: Դեռ լեռան կեսը չանցած՝ Ղափուջուղի «զայլ խեղդող» բուքը զգացնել տվեց իր ամբողջ ուժը ...ուղեցույց վալադները ...անձայն ու անշեղ առատ ձյունի վրա գծում են մեր ճանապարհը: ...Թվում է, որ ամեն մեկը լուռ մտածում է և*

[1] Լեռնագագաթ Զանգեզուրի լեռնաշղթայի հարավային հատվածում Փոքր Կովկաս լեռնահամակարգի ամենաբարձր լեռնագագաթն է (բարձրությունը՝ 3906 մ) (Հակոբյան և ուրիշներ 1988, 955):

*խոստովանում, թե կռիվը թշնամու գերադաս ուժերի դեմ ավելի հեշտ է, քան կռիվը բնության արհավիրքների դեմ» [Նժդեհ, 2002, 59]:*

Հաճախ ճանապարհին ամբողջությամբ փակվում էր փոթորիկից ստեղծված ձյունե բլուրներով, որոնք զինվորները դժվարությամբ էին կարողանում ճեղքել [Նժդեհ, 2002, 59]: Գ. Նժդեհի արշավախումբը ճանապարհին տեսնում է ցրտահարությունից մահացած մարդկային դիեր.

*«...«Ղազարյուրդ» կոչված անիծված վայրը, ուր բուքի բռնված ճամփորդներից շատ քչերին է հաջողվում հրաշքով խուսափել մահից:*

*Գիտեինք, որ այդ կետի վրա միշտ էլ կարելի է անթաղ մեռելների հանդիպել, բայց չէինք սպասում, որ այստեղ կտեսնենք ամբողջ մի գերեզմանատուն: Դիակներ՝ հին ու նոր, մի տեղ գրեթե ամբողջապես, մյուս տեղը՝ կիսով չափ թաղված ձյունի տակ: Դիակներ՝ մասամբ, կամ ամբողջապես գիշատված վայրի գազանների կողմից...» [Նժդեհ, 2002, 59-60]:*

Դիակների շարքում արշավախումբը նկատում է ծանոթ դեմքեր. սուրհանդակ, որը Գողթանից շտապում էր տեղեկացնել շուտափույթ օգնության հրատապության մասին, մի գողթանցի, որը հացահատիկ ձեռք բերելու համար անցել էր Բաղաբերդ և վերադարձին բուքի պատճառով ցրտահարվել [Նժդեհ, 2002, 60]: Մեծ դժվարություններով մարտի կեսերին արշավախումբը հասավ Գողթան՝ առաջ բերելով տեղի բնակչությունը զարմանքն ու հիացմունքը: Այս անհավանական թվացող ճամփորդության մասին Գ. Նժդեհը հետագայում հիշում է.

*«...Մահաշունչ ձմեռուայ կէսին, երբ քաղցած ու թափառ գայլն անգամ սարսափով էր մօտենում Ղափուջուղին՝Ղափանի այդ փոքր Մասսին, մենք մեր հոգու կրակով հալեցրինք ձիները, մեղմացրինք բնութեան արհաւիրքը եւ Գողթան իջանք...» [Նժդեհ, 2006, 422]:*

Ս. Լիսիցյանը ևս ունի Սյունիքի լեռնանցքներում քամիների, բքի և առատ ձյան մասին հիշատակումներ, որոնցում արձանագրված են ձյան տակ մնացած ուղևորների դեպքեր [Լիսիցյան, 1969, 282]:

Գ. Նժդեհի Գողթանի արշավանքն ու Կապուտջուղի լեռնանցքի անցումը վկայում են աշխարհագրական և կլիմայական գործոնների որոշիչ դերի մասին ռազմական գործողությունների կազմակերպման գործընթացում: Գողթանի աշխարհագրական մեկուսացվածությունը պայմանավորված էր բարձր լեռներով, որտեղ Կապուտջուղի լեռնանցքը Կապանի հետ կապող միակ ուղին էր: Ձմռան ամիսներին լեռնանցքի անանցանելիությունը հանգեցնում էր տարածաշրջանի ինքնաբավ գոյությանը՝ զգալիորեն սահմանափակելով հաղորդակցությունն արտաքին աշխարհի հետ: Կլիմայական գործոնները, մասնավորապես՝ ծայրահեղ ցրտերը, առատ ձյունը, փոթորիկներն ու մառախուղները խոչընդոտել են ոչ միայն բնակչության տեղաշարժին, այլև ռազմական գործողություններին: Եթե եղանակային պայմանները նպաստավոր լինեին, հնարավոր կլիներ արշավը կազմակերպել ավելի վաղ և նվազեցնել մարդկային ու նյութական կորուստները [Սիմոնյան, 2017, 416-418]:

Ռազմական աշխարհագրության տեսանկյունից Կապուտջուղի լեռնանցքը ներկայացվում է բնական արգելք, որի հաղթահարումը պահանջում էր ռազմավարական հստակ պլանավորում և տեղանքի առանձնահատկությունների մանրամասն ուսումնասիրություն: Գ. Նժդեհի կողմից այդ ուղղությամբ իրականացված գործողությունները ցույց են տալիս, որ բնական խոչընդոտների հաղթահարումը հնարավոր էր միայն կազմակերպվածության, տեղանքի պատշաճ

ուսումնասիրման և մարտավարական հմտության շնորհիվ: Լեռնանցքի դժվարին պայմանների հաղթահարումը պայմանավորված էր զինվորների հոգեբանական պատրաստվածությամբ, ֆիզիկական դիմացկունությամբ և առաջնորդության արդյունավետությամբ: Լեռնային տեղանքի խիստ պայմանները հանգեցրել են հատուկ մեթոդների կիրառմանը, ներառյալ տեղանքին համապատասխան տեղաշարժման մարտավարությունը, շրջանցող ուղիների օգտագործումը և տեղացի ուղեկցորդների ներգրավումը: Գ. Նժդեհի Գողթանի արշավանքը ցույց է տալիս, որ բնական պայմանները կարող են զգալի ազդեցություն ունենալ ռազմական գործողությունների վրա, բայց, միաժամանակ, դառնալ ռազմավարական գործիք՝ ճիշտ կիրառման դեպքում:

Գ. Նժդեհի աշխատություններում ներկայացված կլիմայական նկարագրությունները վկայում են, որ տվյալ ժամանակահատվածում Սյունիքում ձմեռները բնորոշվել են դժվարին պայմաններով՝ երկարատև ցրտերով, առատ տեղումներով և հաճախակի մառախուղով: Գ. Նժդեհի հաղորդած տվյալներից պարզ է դառնում, որ նույնիսկ Սյունիքի հարավային, համեմատաբար տաք հատվածներում ձմեռը եղել է երկարատև, իսկ լեռնային գոտիներում կլիմայական պայմանները զգալիորեն դժվարացրել են տեղաշարժն ու ռազմական գործողությունների կազմակերպումը: 1920 թ. ապրիլի 13-ին Գ. Նժդեհը Մեղրու շրջանի մասին գրում է.

*«Լեռների վրա դեռ ձյուն կա: Մեր դիրքերում ցուրտ է և փոթորիկ: Փչում է Արաքսի քամին: Բարթազի բարձունքից պարզ երևում են մեր գրաված վայրերի կրակները» [Նժդեհ, 2002, 68]:*

Սյունիքի կլիման նկարագրելիս՝ Գ. Նժդեհն իր աշխատություններում հաճախ օգտագործում է «ձյուն», «անձրևներ», «միգամած եղանակներ», «խիստ մառախուղ», «ամպամած եղանակ», «մշուշոտ եղանակ», «գայլ խեղդող բուք» և նմանատիպ այլ արտահայտություններ: Այս համատեքստում Գ. Նժդեհի մարտավարությունը բնորոշվում էր տեղանքին հարմարվելու, տեղանքի համալիր ֆիզիկաաշխարհագրական պայմաններից առավելագույնս օգտվելու և հակառակորդի շարժունակությունը սահմանափակելու ռազմավարությամբ: Ներկայացված տվյալներում ակնհայտ է, որ եղանակային ծայրահեղ պայմանները ոչ միայն ֆիզիկական, այլև հոգեբանական գործոն էին. մառախուղի, ձյան և անձրևների պայմաններում հայկական ուժերի կողմից մարտական գործողությունների կազմակերպումը հնարավորություն էր տալիս առավելություն ստանալ հակառակորդի նկատմամբ.

*«Մասնաւորապէս գիշերները, մառախուղի, ձիւնի եւ անձրեւների ժամանակ, երբ մեր գայլավաշտերը՝ ծանօթ երկրի տեղագրական պայմաններին՝ կրկնապատկում էին իրենց յանդգնութիւնն ու վճռականութիւնը, թշնամին դառնում էր կենդանի դիակ ընդունակ միայն ծեծուելու» [Նժդեհ, 2002, 24]:*

Այսպիսով, Սյունիքի աշխարհագրական առանձնահատկությունները զգալի ազդեցություն են ունեցել երկրամասի ռազմաքաղաքական գործընթացների վրա: Կլիմայական հակադրությունները, մեկուսացվածությունը և խիստ մասնատված լեռնային ռելիեֆը պահանջում

էին ռազմավարական հմտություն և տեղանքի յուրացում, ինչը հստակ արտացոլված է Գ. Նժդեհի գործողություններում:

**Գետերի մասին հիշատակություններ:** Սյունիքում Գ. Նժդեհը հիշատակում է բազմաթիվ գետեր ու գետակներ, որոնց թվում են Որոտանը, Օխչին [Ողջի], Մեղրիչայը [Մեղրի], Խալաջը [Աճանան], Գեղվաձորը [Գեղի], Հաքարուն [Հագարի], Զաբուղը [Աղավնո], Արաքսը և այլն: Ուշագրավ են, հատկապես, Արաքս գետի վարարման մասին տեղեկությունները: 1921 թ. ապրիլի վերջին խորհրդային վարչակարգից մազապուրծ ազատված և Սյունիքում ապաստանած հազարավոր հայ գաղթականներ [մտավորականներ, սպաներ, գրողներ, նախկին նախարարներ, խորհրդարանի անդամներ և այլք] Մեղրուց պետք է անցնեին Արաքսի պարսկական ափը [Նժդեհ, 2021, 168-169]: Սակայն Արաքսի վրա կամուրջ գոյություն չուներ, և գաղթականության փոխադրությունը կատարվում էր պարսկական լաստերով, ինչը մեծապես դանդաղեցնում էր անցը [Նժդեհ, 2002, 13, 157]:

*«Դրութիւնը փրկելու համար ձեռնարկուեց մի լաստանաւի շինութեան: Մի քանի օրէն պատրաստուեց փրկարար նաւը, բայց չյաջողուեց օգտուել նրանից: Չյաջողուեց երկաթէ հաստ շղթան անցկացնել եւ ամրացնել պարսից ափը: ...Արաքսի սրընթացութեան և վարարութեան շնորհիւ չյաջողուեց շարժման մէջ դնել լաստանավը» [Նժդեհ, 1999, 122]:*

Պարսկական փոքրիկ լաստերով գաղթականության տեղափոխումը տևեց մոտ երկու ամիս, քանզի Արաքսի վարարման և սրընթացության պատճառով հաճախ էր դադարեցվում գաղթականության փոխադրումը.

*«Գիշեր է: Լաստերը չեն գործում, որովհետեւ Արաքսը չի ներում իր գիշերուայ անդորրը խռովողներին: Ոչ ոք կը յանդգնի, անգամ փորձուած մաքսանենգը, այդ ժամին վարար եւ ծովացած Արաքսի ալիքներին վստահելու: Բոլորալուսինը արծաթել է գետափերն ու աւազուտները, որոնց վրայ տխուր առկայծում են հարիւրավոր խարոյկներ» [Նժդեհ, 1999, 123]:*

Հատկանշական է, որ ըստ Գ. Նժդեհի, այս հանգամանքը նույնպես նշանակալի դեր է խաղացել «Ազատ Լեռնահայաստանի» գոյությունը 3-4 ամիս երկարաձգելու գործում [Նժդեհ, 2021, 170]: Կարևոր է նշել նաև, որ 1604 թ. շահ Աբաս I-ի կազմակերպած բռնագաղթի ժամանակ Արաքսի գետն անցնելու ընթացքում զոհվել են հազարավոր մարդիկ [Մալխասյան, 2015, 25]: Զորավար Գ. Նժդեհը նույնպես որոշակի նմանություն է տեսնում Հայոց պատմության այս երկու իրադարձությունների միջև.

*«-Ի՞նչ տարբերութիւն Շահ Աբասի եւ Լենինի միջեւ:...Անշուշտ մեծ է տարբերութիւնը տիտղոսների միջեւ, բայց ոչ գործերի:...Առաջինը ...գերի վարած բազմահազար հայութիւնը տաճիկներին չթողնելու համար՝ հրամայեց վերջիններին սրերի եւ խարազանների հարուածների տակ թափել Արաքսը: Երկրորդը՝ հրամայեց Արաքսի ջրերի մէջ խեղդել հայ ժողովրդի գոյութեան իրաւունքը, նրա ապագան, նրա մտաւորականութիւնը...» [Նժդեհ, 1999, 124]:*

Գ. Նժդեհի հաղորդած այս տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ Արաքսը, 1921 թ. դրությամբ, ջրառատ, սրընթաց և վարար գետ էր, որն ապրիլ-հունիս ամիսներին վարարումների պատճառով հաճախ դառնում էր պարզապես անանցանելի, ինչը տարածաշրջանի պատմաաշխարհագրական պայմանների կարևոր ցուցիչ է: Արաքսի վարարումը և սրընթաց հոսքը ցույց են տալիս գետի ջրաբանական առանձնահատկությունները, որոնք զգալի ազդեցություն են ունեցել տարածաշրջանի ինչպես սոցիալ-տնտեսական, այնպես էլ

ռազմաքաղաքական իրադրության վրա: Արաքսի վարարումը հաճախ խոչընդոտել է Մեղրուց դեպի Պարսկաստան գաղթականների անցմանը, ինչը, իր հերթին, դանդաղեցրել է գործընթացը և մեծացրել կազմակերպչական բարդությունները: Ուշագրավ է նաև, որ Մեղրու բնակիչները, հարցումների ժամանակ, չհիշեցին հետխորհրդային շրջանում Արաքսի վարարման նման դեպքեր, ինչը կարող է վկայել բնական միջավայրի փոփոխությունների մասին՝ պայմանավորված բնածին կամ մարդածին գործոններով:

**Բուսական աշխարհի մասին հիշատակություններ:** Գ. Նժդեհի աշխատություններում ներկայացված են արժեքավոր տեղեկություններ Սյունիքի բուսական աշխարհի մասին: Նրա նկարագրությունները վկայում են, որ Սյունիքի բուսականությունը կարևոր դեր է խաղացել ինչպես բնակչության տնտեսական գործունեության, այնպես էլ ռազմաքաղաքական գործընթացների վրա:

1921 թ. գարնանը, երբ համատարած սով էր տիրում Սյունիքում, բնակչության մեծ մասի համար սնունդ էր ծառայում «իր դաշտերի բանջարեղէնը միայն» [Նժդեհ, 2006, 162]: «Շատ գիւղեր իրենց օրը մթացնում էին բանջարով եւ արմտիքով»,- գրում է զորավարը [Նժդեհ, 1999, 138]: Շրջափակման մեջ հայտնված Լեռնահայաստանը, սովամահությունից խուսափելու համար, հաճախ ապավինում էր Սյունիքի բուսական աշխարհին [Նժդեհ, 2002, 409]:

Գ. Նժդեհի հաղորդած տեղեկություններից պարզ է դառնում, որ Սյունիքի բնակչության և զորքերի համար կենսական նշանակություն է ունեցել երկրամասի հարուստ բուսական աշխարհը՝ իր տարատեսակ ուտելի բույսերով, ինչը վկայում է Սյունիքի հարուստ ֆլորայի մասին:

Հատկապես հետաքրքիր է Գ. Նժդեհի հաղորդած տեղեկությունը վայրի շագանակից պատրաստված հացի մասին.

*«Դիրքապահ վաշտերը շատ ռազմաճակատներում ապրում էին վայրի շագանակի ալիւրից պատրաստուած հացով» [Նժդեհ, 1999, 138]:*

Հայաստանում աճում է շագանակենու մեկ տեսակ՝ Շագանակենի սովորական [Castanea sativa Mill.] [Վարդանյան, 2005, 114; Հարությունյան, 1985, 174]: Սյունիքում շագանակենու այս տեսակի բնական պոպուլյացիան այժմ հիմնականում հանդիպում է «Շիկահող» պետական արգելոցի տարածքում: Այնտեղ ծառը ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, իսկ պտուղները հասունանում են օգոստոսից հոկտեմբեր ամիսներին[1]: Համանման հիշատակություն ունի նաև Ս. Լիսիցյանը, որը նշում է, որ «դաշնակցականների տիրապետության ծանր տարիներին» հացահատիկի պակասի պատճառով Սյունիքում հաց էին պատրաստում կարտոֆիլից՝ խառնելով ցորենի կամ գարու, երբեմն նաև կաղնու պտուղների ալյուր: Այս հացը կոչվում էր «ճաթ», իսկ այն ուտելը հանդիսանում էր ծայրահեղ աղքատության նշան [Լիսիցյան, 1969, էջ 147]:

Իր աշխատություններում Գ. Նժդեհը հաճախ է նշում Մեղրու «հնամենի», «դարավոր» չինարի մասին: 1920 թ. սեպտեմբերի 7-ի առավոտյան Մեղրին Գ. Նժդեհին դիմավորում է «դարավոր «չինարի» տակ» [Նժդեհ, 2002, 72]: Խոսքը Մեղրու կենտրոնական հրապարակում

[1] Տե՛ս ՀՀ կառավարության որոշումը ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին (որոշում N 72-Ն, ընդունված է՝ 29.01.2010 թ., ուժի մեջ է՝ 27.02.2010 թ.):

գտնվող հինավուրց սոսու մասին է: Հոչակավոր այս ծառը ներառված է ՀՀ բնության հուշարձանների ցանկում[1]: 1921 թ. հուլիսին, երբ Գ. Նժդեհը թողնում էր Սյունիքը՝ անցնելու Պարսկաստան, ժողովուրդը Մեղրու չինարի մոտ էր հավաքվել՝ հրաժեշտ տալու իր ազատարար Սպարապետին:

*«Մեղրու հնամենի «չինարի» շուրջը ...խռնւում է յուզուած ժողովուրդը: - Ցտեսութի՛ւն, հերոս ժողովուրդ. ցտեսութիւն եմ ասում եւ ոչ մնաս բարով... Լալիս է ժողովուրդը, որի խելահեղ գրոհներից ու զարկերից շատ էին լացել թուրք, թաթար եւ ռուս հորդաները: Տխուր ղօղանջում էին զանգերը: Մենք թողնում ենք հայրենի լեռները...» [Նժդեհ 1999, 171]:*

Այս ծառը՝ որպես ժողովրդական հավաքատեղի, դարձել էր Սյունիքի բազմադարյա դիմադրողականության ու ազատագրական պայքարի խորհրդանիշ: Այն կարևոր դեր էր խաղում նաև ռազմական հոգեբանության տեսանկյունից, քանզի զինվորների և տեղի բնակչության կապը բնության հետ կարող էր նպաստել մարտական ոգու բարձրացմանն ու դիմադրողականության անսասանությանը:

Գ. Նժդեհի նկարագրություններում արտացոլվում է բնության նկատմամբ նրա խոր հարգանքը: Սյունիքի գոյապայքարի դժվարին օրերին զորավարը հասցրել է նկատել անգամ նոր ծլարձակող ձնծաղիկները: 1920 թ. ապրիլի կեսերին՝ Չավնդուրի կռիվների ժամանակ, հայկական զորքերը շարժվում էին դեպի Բարթազ[2]: Բաց դաշտով դեպի Արաքսի ափն առաջացող Գ. Նժդեհի ջոկատի զինվորներից ոմանք երբեմն-երբեմն կռանում էին ու բարձրանում.

*«Ձնծաղիկներ ենք հավաքում, պատասխանում են իմ հարցին: Բնազդորեն կռանում եմ և ես՝ ձյան տակից գլուխը դեռ նոր դուրս հանած ձնծաղիկի վրա» [Նժդեհ, 2002, 68]:*

Գ. Նժդեհի հաղորդած տեղեկություններից պարզ է դառնում, որ պատերազմի ու սովի պայմաններում Սյունիքի բնակչության ու զորքերի համար կենսական նշանակություն է ունեցել երկրամասի հարուստ բուսական աշխարհն իր տարատեսակ ուտելի բույսերով և պտուղներով, ինչը վկայում է 1920-ական թթ. Սյունիքի հարուստ ֆլորայի մասին: Այս տվյալները կարևոր են տարածաշրջանի բնական միջավայրի վերականգնման և կլիմայական փոփոխությունների վերլուծության համար՝ հնարավորություն տալով գնահատել բնական պայմանների ազդեցությունը պատմական, ռազմական ու սոցիալ-տնտեսական իրադրությունների վրա, ինչպես նաև դրանց նկատմամբ բնակչության հարմարվողականությունը ճգնաժամային պայմաններում:

**Կենդանական աշխարհի մասին հիշատակություններ:** Լեռնահայաստանի գոյապայքարի օրերին Սյունիքում շրջափակման պատճառով հաճախ սով էր տիրում: Գ. Նժդեհն իր աշխատություններում նշում է, թե սովի ժամանակ դիրքապահ զինվորների սննդի հայթայթման հիմնական աղբյուրը որսն էր.

*«Սովը սաստկանում էր օր ըստ օրէ, ժամ առ ժամ: ... Դաշտերում չմնաց ոչ աղվես, ոչ ագռավ: Դիրքապահ գնդերի մի մասի պարտականութիւնը դառաւ որսով սնունդ ճարելը» [Նժդեհ, 1999, 138]:*

---

[1] ՀՀ Կառավարության «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» 14.08.2008 N 967-Ն որոշում:

[2] Գյուղ Զանգեզուրի գավառում: Համապատասխանում է պատմական Բարդութաղին (Սյունիք աշխարհի Կովսական գավառում) (Հակոբյան և ուրիշներ 1986, 624):

Դիրքապահ զինվորները որսում էին տարատեսակ կենդանիներ, ինչը խոսում է Սյունիքի այն ժամանակվա կենդանական հարուստ աշխարհի մասին:

*«...Նրանն էին երկնքի թռչունները, վայրի գազաններից յովազը, արջը. նրանն էին վայրի պտուղները» [Նժդեհ 1999, 141]:*

Սյունիքի կենդանական աշխարհի բազմազանության մասին վկայում է նաև Ս. Լիսիցյանը [Լիսիցյան, 1969, 140-141]: Տարածաշրջանում վայրի կենդանիների առատությունը հնուց ի վեր նպաստել է որսորդության զարգացմանը, ինչի մասին նշում է Սյունյաց աշխարհի պատմիչ Ստեփանոս Օրբելյանը [Հակոբյան, 1966, 23-24]: Որսորդությունն այստեղ ունեցել է հինավուրց և հարուստ ավանդույթներ, ինչը հաստատվում է ինչպես պատմական աղբյուրներում, այնպես էլ՝ ազգագրական ուսումնասիրություններում [Լիսիցյան, 1969, 140-143]:

Հատկապես ուշագրավ է Գ. Նժդեհի հաղորդած տեղեկությունը վագրի մասին.

*«Հայաստանից հեռանալիս հետս եմ առել Արաքսի Հայկական ափում զինուորներիս կողմից զարնուած վագրի մորթին - իմ միակ վարձատրութիւնը...» [Նժդեհ 2006, 432]:*

Վագրերը Հայաստանում հիշատակվում են հնագույն ժամանակներից: Դեռևս I դարում հռոմեացի նշանավոր բանաստեղծ Պուբլիուս Օվիդիուս Նասոն իր «Կերպարանափոխություններ» [Metamorphoses] ստեղծագործության մեջ նշում է «Հայաստանի վագրեր» արտահայտությունը [Ovid, 1951, p. 415; Ovid, 1958, p. 371]: Հայաստանում վագրերի մասին հիշատակումներ կան նաև այլ հեղինակների աշխատություններում [Օվիդիուս, 2021, էջ 541-542], ինչը վկայում է երկրամասում այդ կենդանիների երբեմնի առկայության մասին:

Հայաստանում վագրեր XVII-XIX դարերում հիշատակել են նաև եվրոպացի ճանապարհորդներ Ժոզեֆ Տուրնեֆորը, Մորից ֆոն Կոցեբուն և ուրիշներ [Անանյան 1961, 187]: Վախթանգ Անանյանն իր «Հայաստանի կենդանական աշխարհը» բազմահատոր, կոթողային աշխատության մեջ Սյունիքում [Մեղրի, Շուռնուխ, Արաքսի հովիտ] ու Նախիջևանում վագր հիշատակում է մինչև XX դարի կեսերը: Հեղինակի կարծիքով վագրերը կարող էին Սյունիք ներթափանցել Իրանից [Անանյան, 1961, 186-189]: Նույնատիպ հիշատակություն ունի նաև Ս. Լիսիցյանը, որը նշում է Սյունիքի նաև գերեզմանաքարերի վրա վագրի որսի տեսարանի առկայության մասին [Լիսիցյան, 1969, 141]:

Մեր կարծիքով Գ. Նժդեհի հիշատակած վագրը մեծ հավանականությամբ կարող էր պատկանել Թուրանյան վագր [Panthera tigris virgata] ենթատեսակին: Հայաստանը ներառված է Թուրանյան կամ Կասպիական վագրի տարածման պատմական արեալում [Heptner and Sludskii 1992, 110; Driscoll 2011, fig. 1; Faizolahi 2016, 7][1]: Վագրի այս ենթատեսակը ներկայում ամբողջ աշխարհում անհետացած է: Վայրի բնության մեջ Թուրանյան վագրի համար հիմնական որս էին վայրի խոզն [վարազ] ու ազնվացեղ եղջերուն [Faizolahi 2016, 5, 7]: Սյունիքում ազնվացեղ եղջերու հիշատակվում է մինչև XIX դարի վերջերն ու XX դարի կեսերին [Անանյան 1962, 242-243]: Սյունիքի

[1] Տե՛ս նաև ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի «Վայրի կենդանիների գաղթական տեսակների պահպանության մասին կոնվենցիա» (UNEP Convention on the Conservation of Migratory Species of Wild Animals), 2010 թ., էջ 7:

մարզի Շիկահող գյուղի Ս. Ստեփանոս Նախավկա եկեղեցու հարավային ավանդատան պեղումների ժամանակ հայտնաբերվել է ազնվացեղ եղջերուի եղջյուրի հատված [Նալբանդյան 2022, 15]: Վայրի խոզն այսօր էլ Սյունիքի կենդանական աշխարհի լիարժեք մաս է կազմում: Այսպիսով՝ Սյունիքի բնական պայմանները բավարար էին Թուրանյան վագրի գոյատևման համար:

Գ. Նժդեհի աշխատություններում Սյունիքի գիշատիչ կենդանիներից հիշատակվում են աղվեսը, գայլը, արջը, հովազը [ընձառյուծ], վագրը և այլն [Նժդեհ 1999, 141; 2006, 432]: Նշված կենդանատեսակները, բացի վագրից, ներկայումս էլ են Սյունիքի ֆաունայի մաս կազմում:

Հետաքրքիր է բվի մասին վկայությունը: 1920 թ. ապրիլի սկզբին Ասկյուլումի կռիվների առթիվ Գ. Նժդեհը այդ տեղանքում հիշատակում է բու.

*«–Հե, տեսնո՞ւմ եք,– միջամտում է շրջանին ծանոթ մի շիկահողցի,– Ասկյուլումի փեշերին ընկած էն մեծ շենքը հայկական հին եկեղեցի է դա, ուր ... գիշերները մենավոր բուն է վայում» [Նժդեհ, 2002, 65]:*

Սյունիքում ներկայումս հայտնի է բվի 6 տեսակ՝ 1 չվող ու 5 նստակյաց: 2020 թ. հուլիսին ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի «Շիկահող» պետական արգելոցում խոշոր կաթնասունների ու թռչունների մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է թավշատ բու [Aegolius funereus], որը Հայաստանում հազվագյուտ հանդիպող տեսակ է և գրանցված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում, որպես «խոցելի» տեսակ[1]: Գ. Նժդեհի վերոհիշյալ վկայությունը, ամենայն հավանականությամբ, վերաբերում է անտառաբվին [Strix aluco][2], որը բացարձակ գիշերային թռչուն է [Ադամյան, 1985, 202]:

Սյունիքի կենդանական աշխարհն իր բազմազանությամբ կարևոր դեր է խաղացել ինչպես տնտեսական, այնպես էլ ռազմավարական առումով: Պատերազմական դրության ու շրջափակման պայմաններում վայրի կենդանիների պաշարներն ապահովել են տեղի բնակչության ու զորքերի կենսական պահանջները՝ ծառայելով որպես սննդի հիմնական աղբյուր: Որսորդությունը նպաստել է տնտեսական կայունությանը և արտացոլել բնակչության հարմարվողականությունը շրջակա միջավայրին:

Սույն վկայությունները հնարավորություն են տալիս վերականգնելու Սյունիքի պատմական ֆաունայի առանձնահատկություններն ու գնահատելու բնական պայմանների ազդեցությունը ռազմական աշխարհագրության համատեքստում:

**Շրջակա միջավայրի էկոլոգիական փոփոխությունների մասին հիշատակություններ:** Գ. Նժդեհի հաղորդած տեղեկությունները կարևոր աղբյուր են նաև Սյունիքի բնության ու շրջակա միջավայրի էկոլոգիական վիճակի փոփոխությունները վերլուծելու համար: XX դարի առաջին կեսի պատմական իրադարձությունները զգալի վնաս հասցրին Սյունիքի բնությանը: Դրա

[1] Տե՛ս ՀՀ Կառավարության որոշումը ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին (որոշում N 71-Ն, ընդունված է՝ 29.01.2010 թ. , ուժի մեջ է՝ 27.02.2010 թ.):

[2] Այս տեղեկությունը մեզ բանավոր հաղորդել է ՇՄՆ «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի գիտության և տուրիզմի բաժնի պետ, կենսաբազմազանության մոնիթորինգի մասնագետ, կենդանաբան Հարութ Աղաթելյանը (27. 04. 2022 թ.): Ըստ Հ. Աղաթելյանի՝ նշված տեղանքում Գ. Նժդեհի հիշատակած բվին վարքագծով առավել մոտ է անտառաբուն, քիչ հավանական է նաև ականջավոր բուն (Asio otus): Հ. Աղաթելյանի կարծիքով առավելապես գիշերային ու աղմկոտը Անտառաբուն է, որը գիշերները լացում է, ծիծաղում, ասես մանկան ճիչ արձակի:

հիմնական պատճառը շրջափակման արդյունքում առաջացած սովն էր, որն էական վնաս հասցրեց հատկապես կենդանական աշխարհին: Սովի պատճառով առաջացած տեղի հայության ծանր կացության մասին Գ. Նժդեհը գրում է, որ ժողովրդի մեծ մասը սնվում էր «շների ու կատուների մսով» [Նժդեհ, 2002, 55]: Մեկ այլ տեղ անդրադառնալով Գողթանում տիրող ծանր պայմաններին՝ գրում է.

*«Գողթանը գործածեց անգամ կատուի և իշու միս: Դաշտերում չմնաց ոչ աղուէս, ոչ ագռաւ: Դիրքապահ գնդերի մի մասի պարտականութիւնը դառաւ որսով սնունդ ճարելը» [Նժդեհ, 1999, 138]:*

Սյունիքում նշված ժամանակաշրջանում մեկ անգամ չէ, որ սով առաջացավ: Երկրամասում սովն իշխում էր դեռ 1918 թվականից: 1919 թ. Հայաստանի Հանրապետությունում սովը համատարած բնույթ ստացավ [Խատիսյան, 1968, 131-132]: Գողթանում այն խիստ սաստկացավ 1919-1920 թ. ձմռանը: Սյունիքում 1920 թ. սովը հնարավոր եղավ մեղմել ռազմական գործողությունների արդյունքում ձեռք բերված միջոցներով, 1921 թ. սկզբին՝ Կարմիր բանակից խլված պաշարներով, բայց 1921 թ. գարնանը սովը դարձյալ խիստ մասսայական բնույթ ստացավ [Նժդեհ, 1999, 138]: Մեծ կորուստներ կրեց Սյունիքի կենդանական աշխարհը: Կարելի է ենթադրել, որ 1930-ական թթ. խորհրդային շրջանի սովը նույնպես խիստ բացասաբար ազդեց երկրամասի կենդանական աշխարհի վրա: Պատահական չէ, որ գիշատիչ կենդանիներից գորշ արջի պոպուլյացիան խիստ կրճատվեց, հովազը [ընձառյուծ] մինչև 2000-ական թվականների սիկզբը գրեթե չէր հանդիպում, վագրը ներկայումս համարվում է անհետացած:

Համադրելով Գ. Նժդեհի աշխատություններում նկարագրված Սյունիքի բնությունը այժմյան իրականության հետ՝ տեսնում ենք, որ XX դարասկզբին Սյունիքն ուներ ավելի հարուստ բնաշխարհ՝ ջրառատ գետեր, փարթամ բուսականություն, տարատեսակ վայրի կենդանիներ և այլն: Օրինակ՝ Մեղրու մասին Գ. Նժդեհի նկարագրությունն էականորեն տարբերվում է հետագայի նկարագրից [տե՛ս Հայկական ՍՍՀ ֆիզ. աշխ., 1971, 396].

*«Մեղրեցին – դա Սյունիքի շվեցարացին է: Մեղրին - ավելի քան մի շվեցարական գյուղ: Թաղված ծառ ու ծառաստանների մեջ, ... այդ անվանի գյուղը, ըստ ամենայնի, կմնա իդեալը հայ գյուղացիության համար» [Նժդեհ, 2002, 72]»:*

Սյունիքի հարավում՝ Արևիքում [Մեղրու շրջան], Գ. Նժդեհը ձյուն և ցուրտ եղանակներ հիշատակում է մինչև ապրիլ ամսվա կեսերը: Վերոնշյալ ժամանակաշրջանում Սյունիքում ձմեռներն ավելի երկարատև են եղել և ձյունառատ: Ձյան շերտի հաստությունը բարձր լեռների գագաթամերձ մասերում երբեմն հասել է մի քանի մետրի: Ցրտամահության դեպքերը ասես սովորական են եղել: Առատ տեղումների ու ձյան հաստ շերտերի պատճառով գետերն ավելի ջրառատ են եղել և սրընթաց, հաճախ են վարարել: Ամառները եղել են կարճատև ու զով: Դաշտերն ու անտառները լի են եղել զանազան կենդանիներով և վայրի գազաններով:

Գ. Նժդեհի աշխատությունները, համադրելով հետագա աղբյուրների հետ, հնարավորություն են տալիս վերականգնելու Սյունիքի էկոլոգիական փոփոխությունների շարժընթացը՝ ընդգծելով ռազմաքաղաքական իրադարձությունների ու բնական պայմանների

փոխկապվածությունը: Նրա նկարագրությունները ցույց են տալիս, թե ինչպես պատերազմները, շրջափակումն ու սովը մեծ վնաս հասցրին երկրամասին էկոլոգիային: Այս տվյալները կարևոր նշանակություն ունեն բնական պայմանների դերը պատմական գործընթացներում, ինչպես նաև էկոլոգիական հավասարակշռության վրա դրանց ազդեցությունը վերլուծելու համար:

**Սյունիքի բնական պայմանների ռազմաաշխարհագրական նշանակությունը:** Գ. Նժդեհը՝ որպես փորձառու ռազմական ղեկավար, անկասկած ուսումնասիրել է տեղանքի բնական պայմանները, առաջին հերթին՝ ռազմավարական նկատառումներով: Ուստի Սյունիքի աշխարհագրական առանձնահատկությունների վերաբերյալ մասին նրա նկատառումները կարևոր նշանակություն ունեն ռազմավարական տեսանկյունից: Օրինակ՝ Գեղվաձորի[1] արշավանքի ժամանկ Գ. Նժդեհը մանարմասն վերլուծում է տեղանքի աշխարհագրական առանձնահատկությունները.

*«Մոտ մի շաբաթ տևող իմ կատարած հետախուզությունները՝ Գեղվաձորի աշխարհագրական դիրքին և տեղագրական դրությանը ծանոթանալու նպատակով, պարզում են ինձ, որ Գեղվաձորը այն եզակի վայրերից է, ուր կռվի հաջողությունը կարելի է սպասել շատ բաներից, միայն ոչ ռազմավարական սովորական ձևերից: ...Բույն դրած հսկա լեռների վրա և որջացած անդնդախոր ձորերի մեջ՝ ... այդ հեքիաթական ձորը, ուր ամեն մի բարձունք մի անառիկ բերդ է, ամեն մի ժայռ՝ մի բնական ամրություն» [Նժդեհ 2002, 46]:*

Զինված պայքարի պատմությունը ցույց է տալիս, որ ռազմական գործողությունների արդյունքները հիմնականում պայմանավորվել են մարտաբեմի աշխարհագրական առանձնահատկություններով: Տարածքի, կլիմայի ու ռելիեֆի առանձնահատկությունների ճիշտ գնահատումը և դրանց խելամիտ օգտագործումը վճռորոշ դեր են ունեցել պատերազմներում՝ հակառակորդի նկատմամբ առավելություն ստանալու համար [Սայադյան, 2020, 62-63]: Լեռնային ռելիեֆը զգալի դժվարություններ է ստեղծում հարձակվող հակառակորդի համար: Այն բարդացնում կամ ամբողջությամբ բացառում է խոշոր հարձակողական խմբավորումների ներթափանցումը, ստիպելով գործել փոքրաթիվ ուժերով և բաժանված ուղղություններով: Գ. Նժդեհը խորությամբ հաշվի էր առնում Սյունիքի աշխարհագրական առանձնահատկությունները՝ դրանք օգտագործելով ռազմավարական առավելություն ստեղծելու համար: Անդրադառնալով Ասկյուլումի բարձունքին՝ նա նշում է.

*«Ասկյուլումի սեպաձև բարձունքը՝ որպես բնական անառիկ ամրություն, բարձրանում է Օխչի գետի աջ ափին, դեմ հանդիման Սուսան սարին, անցափակելով Զանգեզուրի նախադուռը: ...Արևելյան, ինչպես և հյուսիսային կողմից այդ ամրության մերձենալ անկարելի է, որովհետև այդ կողմից նա բարձրանում է ուղղահայաց ձևով, պատի պես» [Նժդեհ 2002, 65]:*

Լեռներում զորքերի տեղաշարժը, մարտակարգի կազմակերպումն ու հարձակման տեմպերը զգալիորեն դժվարանում են: Ճանապարհներն ու հովիտները դառնում են հիմնական ուղղություններ, իսկ լեռնաշղթաների լանջերն ու նեղ անցումները սահմանափակում են զորքերի և տեխնիկայի շարժը [Սայադյան, 2020, 68]: Այս առումով Սյունիքը, իր խիստ մասնատված ռելիեֆով, լանդշաֆտային բազմազանությամբ ու աշխարհագրական

[1] Գեղի գետը Ողջի գետի վտակներից է (Հակոբյան և ուրիշներ, 1986, 829):

առանձնահատկություններով, ռազմավարական նշանակալի ազդեցություն են ունեցել ռազմական գործողությունների ընթացքի և ելքի վրա։

Բուսական ու կենդանական աշխարհը կարևոր դեր են ունեցել ռազմական գործողություններում ոչ միայն որպես սննդի աղբյուր, այլև պաշտպանական և ռազմավարական նպատակներով։ Խիտ անտառները ու լեռնային բուսածածկույթը ծառայել են որպես բնական արգելքներ, դիտակետեր ու ամրություններ, որոնք նպաստել են մարտավարական առավելության ստեղծմանը։ Ձիաբուծությունը երկրամասում նույնպես ունեցել է կարևոր նշանակություն՝ ապահովելով զորքերի շարժունակությունը։ Սյունիքը, հնուց ի վեր լինելով ձիաբուծական խոշոր կենտրոն, Արշակունյաց թագավորության շրջանում հայոց բանակին մատակարարել է 19400 հեծյալ, ինչը խոսում է տարածաշրջանի ռազմական ներուժի ու ռազմավարական կարևորության մասին [Հակոբյան և ուրիշներ, 1998, 640]։ Այս հանգամանքը էական նշանակություն պետք է ունենար նաև Գ. Նժդեհի ղեկավարած Սյունիքի գոյապայքարի ժամանակաշրջանում՝ նպաստելով հայկական ուժերի զինվածության, շարժունակության ու ռազմական հաջողությունների ապահովմանը։

Գ. Նժդեհը զորքերի մարտական ոգին բարձրացնելու և տեղի բնակչության վրա հոգեբանական ազդեցություն գործելու նպատակով ոչ միայն խրախուսել է լեռների ու բնության հուշարձանների պաշտամունքը, այլև օգտագործել է Սյունիքի պատմամշակութային հարուստ ժառանգությունը։ Հայկական հինավուրց բերդերի ու վանքերի ազատագրումը նրա ռազմական գործողություններին տվել են «խաչակրաց արշավանքի» խորհրդանշական բնույթ՝ նպաստելով հայրենիքի պաշտպանության գաղափարի ամրապնդմանը ու ժողովրդի ազգային ինքնագիտակցության բարձրացմանը [Ղազարյան, 2024, 65]։

Այսպիսով՝ Սյունիքի բնական միջավայրը ոչ միայն պայմանավորել է ռազմական գործողությունների բնույթը, այլև նպաստել դրանց հաջողությանը՝ հիմնվելով տեղանքի աշխարհագրական առանձնահատկությունների խելամիտ օգտագործման վրա։

**Եզրակացություն:** Ամփոփելով կարելի է եզրակացնել, որ Գ. Նժդեհի հաղորդած տեղեկությունները կարևոր ու արժանահավատ աղբյուր են Սյունիքի բնության, պատմության ու ռազմական աշխարհագրության ուսումնասիրության համար։ Նրա աշխատություններում մանրամասն ներկայացված են տարածաշրջանի լեռները՝ իրենց բնական ու ռազմավարական առանձնահատկություններով, կլիմայական խիստ պայմանները՝ երկարատև ձմեռներով, խիտ մառախուղներով ու վտանգավոր փոթորիկներով, գետերը՝ իրենց վարարումներով, բուսական աշխարհը՝ իր հարստությամբ, կենդանական աշխարհն իր տեսակների բազմազանությամբ և այլն։ Այս տվյալները հնարավորություն են տալիս վերականգնել Սյունիքի 1920-ական թվականների բնական միջավայրը, ուսումնասիրելու մարդ-բնություն փոխհարաբերության առանձնահատկությունները, գնահատելու էկոլոգիական փոփոխություններն ու տարածաշրջանի ռազմավարական նշանակությունը։

## Գրականության ցանկ

**Adamyan M.,** 1985, Hayastani t'rchunery, Yerevan, "Sovetakan Grogh" hrat., 232 p. [in Armenian].
**Ananyan V.,** 1961, Hayastani kendanakan ashkharhy, vol. 1, Yerevan, Haypethrat, 436 p. [in Armenian].
**Ananyan V.,** 1962, Hayastani kendanakan ashkharhy, vol. 2, Yerevan, Haypethrat, 415 p. [in Armenian].
**Garegin N.,** 1999, Azat Syunik', Beirut, Hamazgayin Vahe Setean tparan, 176 p. [in Armenian].
**Garegin N.,** 2002, Erker, vol. 2, Yerevan, HH Arkhivayin gorts' gortsakalut'yun, 504 p. [in Armenian].
**Garegin N.,** 2006, Hatan'tir, Yerevan, "Amaras", 708 p. [in Armenian].
**Garegin N.,** 2013, Hishir paterazmy, Yerevan, "Hayrenik'" akumb, 101 p. [in Armenian].
**Garegin N.,** 2021, Im pataskhany, Yerevan, Hegh. hrat., 200 p. [in Armenian].
**Ghazar'yan G.,** 2024, Garegin Nzhdehi dery Nikoghayos Marri Anii hnagitakan peghumneri havakats'uny prkelelu gorts'um [1918 t.], Ashkhatutyunner Hayastani patmut'yan t'angarani, N 2[14], pp. 60-68. [in Armenian].
**Hakobyan T.,** 1966, Syuniki t'agavorut'yuny: Patma-ashkharhagrakan arumov, Yerevan, "Mitk'" hrat., 220 p. [in Armenian].
**Hakobyan T., Melik-Bakhshyan S., Barseghyan H**. 1986, Hayastani yev harakits shrjaneri teghanunneri barraran, vol. 1, Yerevan, YPH hrat., 992 p. [in Armenian].
**Hakobyan T., Melik-Bakhshyan S., Barseghyan** H. 1988, Hayastani yev harakits shrjaneri teghanunneri barraran, vol. 2, Yerevan, YPH hrat., 992 p. [in Armenian].
**Hakobyan T., Melik-Bakhshyan S., Barseghyan** H. 1998, Hayastani yev harakits shrjaneri teghanunneri barraran, vol. 4, Yerevan, YPH hrat., 804 p. [in Armenian].
**Harutyunyan L., Harutyunyan S**. 1985, Hayastani dendrofloran, vol. 1, Yerevan, "Lus", 437 p. [in Armenian].
Haykakan SSH fizikan ashkharhagrutyun [ed., introduction by A. Baghdasaryan] 1971, Yerevan, HSSH GA hrat., 469 p. [in Armenian].
**Khat'isyanyan A.,** 1968, Hayastani Hanrapetut'yan tsagum n zargats'umy, Beirut, Hamazgayin tparan, 491 p. [in Armenian].
**Lisits'yan S.** 1969, Zangezuri hayerë, Yerevan, Haykakan SSH GA hrat., 334 p. [in Armenian].
**Malkhasyan M.**, 2015, Patmajoghordagrakan usumnasirut'yunner: gitakan haghordagrut'yunneri jhoghovatsu, vol. 1, Yerevan, YPH hrat., 248 p. [in Armenian].
**Nalbandyan A.,** 2022, Shikahoghi S. Step'anos Nakhavka yekeghets'u peghumneri ardyunk'nery, Ashkhatutyunner Hayastani patmut'yan t'angarani, N 2[10], pp. 8-17. [in Armenian].
Publius Ovidius Naso 2021, Kerparanapokhutyunner, translation from Latin, introduction and notes by **Gohar Muradyan and Aram Topchyan**, Yerevan, "Zangak" hrat., 640 p. [in Armenian].
**Sayadyan H.,** 2020, Hayastani razmakan ashkharhagrutyun, Yerevan, Hegh. hrat., 315 p. [in Armenian].
**Simonyan A.,** 2017, Zangezuri goyamarty 1917-1921 t't', Yerevan, YPH hrat., 1096 p. [in Armenian].
**Vardanyan Zh**., 2005, Tsaragitutyun, Yerevan, HH GA hrat., 370 p. [in Armenian].
"Syunik" tert 1920, Goris, 26 p'et'var'i, N 7. [in Armenian].